



Վանաձորի Օրհուս կենտրոնի 2013թ.
կատարած աշխատանքների տարեկան
հաշվետվություն
/փետրվար-նոյեմբեր/

Գործունեության եզրափակիչ հաշվետվություն

Կենտրոնի կողմից իրականացված գործունեության նկարագրություն

Վանաձորի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնը 2013թ. իր աշխատանքային գործունեությունը սկսել է փետրվարի 4-ին:

Հաշվետու ժամանակահատվածում Վանաձորի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնում՝ կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել է 16 միջոցառում, այլ կազմակերպությունների հետ համատեղ իրականացվել է 7 միջոցառում, կենտրոնի համակարգողը մասնակցել է 1 հանրային լսման, իրականացվել է փորձագետների խորհրդի 1 նիստ, կենտրոնի համակարգողը մասնակցել է Վանաձորի Օրհուս կենտրոնի գործունեությունը լուսաբանող 2 հեռուստահաղորդման, կենտրոնի կողմից իրականացվել են 3 տեղեկատվական հարցումներ: Վանաձորի Օրհուս բնապահպանական տեղեկատվական կենտրոն

Ստորև ներկայացվում է միջոցառումները և դրանց իրականացման նպատակը:

Կենտրոնի էլեկտրոնային ցանցի ընդլայնում: Օպերատիվ և հասանելի տարբերակով համայնքի ակտիվ քաղաքացիների շրջանում տեղեկատվության տարածում:	Կենտրոնի փորձագետների խորհուրդը կհամալրվի նոր անդամներով: Շարունակական աշխատանք կտարվի խորհրդի անդամների հետ: Կընդգրկվեն համայնքի ավագանու ներկայացուցիչներ:
Հանդիպումներ Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի համայնքների ղեկավարների հետ: Համայնքի համար բնական աղետների վտանգների քննարկում:	Համայնքային անվտանգության վտանգների բացահայտում: Մոցիալ տնտեսական զարգացման ծրագրերում ներառում:

<p>«Հայացք ճակատային գծից» ծրագրի ներկայացում: իրականացվել է «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն»-ի կողմից «Օքսֆամ» Մեծ Բրիտանիա միջազգային կազմակերպության և Շվեյցարական զարգացման գործակալության SDC-ի ֆինանսական աջակցությամբ:</p>	<p>«Հայացք ճակատային գծից» 2013 ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի 7 համայնքներում Լոռվա մեղվաբույծներ ՀԿ-ի և Վանաձորի Օրինա կենտրոնի կողմից իրականացվել են հարցումներ և կազմակերպվել է հանրային քննարկում: Ակնկալվում է աղետների ռիսկի նվազեցման ոլորտում պետական, քաղաքացիական հասարակության և շահագրգիռ կողմերի միջև վստահության մակարդակը, կրթարժանա հասարակության իրազեկվածությունը և տեղական մակարդակում արտակարգ իրավիճակների և աղետների դեմ պայքարելու համար քաղաքական կամքը:</p>
<p>«Հայացք ճակատային գծից» ծրագրի արդյունքների ներկայացում: իրականացվել է «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն»-ի կողմից «Օքսֆամ» Մեծ Բրիտանիա միջազգային կազմակերպության և Շվեյցարական զարգացման գործակալության SDC-ի ֆինանսական աջակցությամբ:</p>	<p>Տրամադրված տեղեկատվություն կօգտագործվի կենտրոնի հետագա գործունեության ընթացքում:</p>
<p><Սննդային հավելումներ> դասընթաց աշակերտների համար:</p>	<p>Աշակերտները ավելի կկարևորեն սննդի որակը: Կապ է ստեղծվում մարդու Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության միջև: Աշակերտների համար կկազմակերպվեն նաև այլ Էկոլոգիական դասընթացներ: Էկոկրթությանը աջակցություն:</p>
<p>Բնապահպանություն ոլորտում կոռուպցիայի հիմնախնդիրները: Կազմակերպիչները Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա և Լոռու մարզի հակակոռուպցիոն կենտրոն:</p>	<p>Մասնակցություն և ելույթ: Համագործակցությունը շարունակական է:</p>
<p>Տեղեկատվական հանդիպում <Կլիմայի փոփոխություն. Միջազգային գործողություններ:</p>	<p>Կկազմակերպվեն կոնվենցիաների լուսաբանումներ</p>

<p>Էյ-Ջի Սերվիս կազմակերպության կողմից Վանաձորի խմելու ջրի խողովակաշարի վրա փոքր ՀԷԿ-ի կառուցման հասարակական լսում</p>	<p>Տեղեկատվության օգտագործում և իրականացման դեպքում՝ դրական փորձի փոխանակում և ընդլայնում</p>
<p>Վանաձորի Համայնքային աշխատանքային խմբի (ՀԱԽ) քննարկումներ՝ համայնքային աշխատանք</p>	<p>Համայնքային հիմնախնդիրների բացահայտում, դրանց խնդիրներին լուծում տալու աշխատանք</p>
<p>Լոռու մարզի 2014-2017 թթ սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի բնապահպանական մասում ծրագրային առաջարկների քննարկում</p>	<p>Մասնակցություն որոշումների ընդունմանը տարածքային կառավարման մակարդակում</p>
<p>Լոռու մարզի 2014-2017 թթ սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի գյուղատնտեսության մասի քննարկում</p>	<p>Մասնակցություն որոշումների ընդունմանը տարածքային կառավարման մակարդակում</p>
<p>Լոռու մարզի 2014-2017 թթ սոցիալ տնտեսական զարգացման ծրագրում ներառման առաջարկությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ Լոռու մարզպետարան</p>	<p>Մասնակցություն որոշումների ընդունմանը տարածքային կառավարման մակարդակում</p>
<p>Մարց գյուղի այցելություն: Հանդիպում բնակիչների հետ: Հողվածներ, հեռուստահաղորդում:</p>	<p>Մասնակցություն շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունմանը համայնքային մակարդակում: Տեղեկատվության մատչելիությանը ուղղված գործունեություն</p>
<p>Կլիմայի փոփոխության ուսումնական ձեռնարկի շնորհանդես Մերսի Կորպ</p>	<p>Էկոկրթություն: Գլոբալ հիմնախնդիրների քննարկում:</p>
<p>Կլիմայի փոփոխությունը և էներգետիկան Ֆրիդրիխ Նաոմանի հիմնադրամի հրավերով մասնակցություն</p>	<p>Կլիմայի փոփոխությանը հարմարվողականության պլանի մշակում՝ համատեղ այլ մասնակիցների հետ: Որոշումների ընդունմանը մասնակցություն</p>
<p>Դասընթաց աշակերտների համար՝ Կլիմայի փոփոխություն՝ ինչ է այն</p>	<p>Էկոկրթություն</p>
<p>Դասընթաց աշակերտների համար՝ Կլիմայի փոփոխության հարմարվողականություն</p>	<p>Էկոկրթություն</p>

<p>Ազգային փորձաքննության առանձնահատկությունները ֆիլմի շնորհանդես և քննարկում</p>	<p>Հայաստանում Օրհուսի կոնվենցիայի իրականացման փորձի լուսաբանում, հասարակության իրազեկում:</p>
<p>Կլիմայի փոփոխությանը հարմարվողականության պլանավորում Լոռու մարզի համար:</p>	<p>Մասնակցություն շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունմանը:</p>
<p>Դեբեդի գետավազանի գետերի վիճակը</p>	<p>Տեղեկատվության մատչելիություն: Էկոկրթություն:</p>
<p>Քննարկում մարզի բնապահպանական հիմնախնդիրները՝ Արթուր Գրիգորյան</p>	<p>Համայնքային մակարդակում նապահպանական խնդիրների քննարկում</p>
<p>Աշխատանքային հանդիպում Ալավերդի քաղաքում: Կենտրոնի աշխատանքների ներկայացում</p>	<p>Փորձի փոխանակում: Հաշվետվություն:</p>
<p>Աշխատանքային հանդիպում Գյումրիում</p>	<p>Փորձի փոխանակում</p>
<p>Դասընթաց պրեզենտացիայի միջոցով աշակերտների համար Հողաբարելավում</p>	<p>Էկոկրթություն</p>
<p><Մարզի բնապահպանական հիմնախնդիրները և Օրհուսի կոնվենցիան> Սեմինար ուսանողների համար:</p>	<p>Միջազգային կոնվենցիաների լուսաբանում</p>
<p>Վանաձորի ֆորտունա հեռուստատեսության եթերով Բաց սենյան հաղորդման ընթացքում ներկայացվել է Վանաձորի Օրհուս կենտրոնի գործունեությունը</p>	<p>Կենտրոնի աշխատանքների հանրայնացում</p>
<p>Մասնակցություն ECOMAP.AM կայքի շնորհանդեսին</p>	<p>Համագործակցություն երիտասարդ բնապահպանների հետ</p>
<p>Մասնակցություն կլիմայի փոփոխության և աղետների ռիսկերի նվազեցում> ծրագրի ամփոփիչ հանդիպմանը: Բուլաչաուրի, Վրաստան</p>	<p>Վանաձորի Օրհուս կենտրոնում իրականացված մի շարք միջոցառումների ամփոփում: Մասնակցություն շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունմանը:</p>
<p>Փորձագետների խորհրդի նիստ</p>	<p>Ամփոփվել են տարվա ընթացքում կատարված աշխատանքները: Փորձագետների խորհրդի կազմում նոր անդամներ կրնդորկվեն 2014 թ-ին: Քննարկվել է ապագայում իրականացվելիք աշխատանքը:</p>

<p>Տեղեկատվական հարցում Լոռու մարզի Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Թեղուտ, Շնող, Ախթալա համայնքներում բնակչության առողջական վիճակի վերաբերյալ</p>	<p>Տեղեկատվության մատչելիություն: Համագործակցություն Էկոլուր տեղեկատվական կայքի հետ:</p>
<p>Տեղեկատվական հարցում Դեբեդ գետի ջրում քիմիական տարրերի առկայության և քանակի վերաբերյալ</p>	<p>Տեղեկատվության օգտագործում և տրամադրում շահագրգիռներին:</p>
<p>Տեղեկատվական հարցում Ախթալա գետի պղնձի և այլումինի իոնների առկայության, քանակի և պատճառների մասին:</p>	<p>Տեղեկատվության օգտագործում և տրամադրում շահագրգիռներին:</p>

Կենտրոն այցելությունների վերաբերյալ տեղեկատվություն

Կենտրոն այցելողների ընդհանուր թիվը կազմել է 850, որից 300 այցելությունները եղել են տարբեր միջոցառումների մասնակիցները, մնացած այցելուները գրադարանի, ֆիլմադարանից, ինտերնետից և տեխնիկայից օգտվողներն են, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու նպատակով՝ լրագրողներ, ուսանողներ, ՀԿ ներկայացուցիչներ: Հաշվի առնելով կենտրոնի կողմից լրատվական կազմակերպությունների հետ աշխատանքը՝ իրականացված գործունեության ադեցությունը ավելի մեծ է:

Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների,

1.1 ՆՊԱՏԱԿ 1

Համայնքներում կազմակերպում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրինուսի կոնվենցիա) և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:

1.1.1 Այս ժամանակահատվածում կենտրոնի կողմից նախաձեռնվել և իրականացվել են թվով 16 սեմինար քննարկումներ, հանդիպումներ ուղղված բարձրացնելու հասարակության տեղեկատվության մակարդակը Օրինուսի կոնվենցիայի և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի մասին: Ինչպես նաև կենտրոնի կողմից իրականացվող մի շարք միջոցառումների և ծրագրերի ժամանակ են լուսաբանվել են Օրինուսի կոնվենցիան:

1.1.2 *Լուսաբանման արդյունքում Օրհուսի կոնվեցիայի և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի վերաբերյալ բարձացել է հասարակության իրազեկվածության մակարդակը:*

1.2 **ՆՊԱՏԱԿ 2**

Հետևում է .ե/ .հլև մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):

1.2.1 *Մշտապես կենտրոնի ուշադրության կենտրոնում են եղել որոշումների ընդունմանը հանրության մասնակցության մատչելիությունը որոշումների ընդունման վաղ փուլերում: Այս կետի համաձայն իրականացվել են խորհրդատվական հանդիպումներ բնակիչների հետ, անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն ստանալու հարցումներ են ուղարկվել պատկան մարմիններին: Բնակիչները և շահագրգիռ անձինք տեղեկացվել են նախատեսվող գործունեության մասին, ինչպես նաև հնարավորություն են ունեցել մասնակցել որոշումների ընդունման գործընթացներին: Կազմակերպվել են բնապահպանական ուղղվածության քննարկումներ, բանավեճեր, կլոր սեղաններ, որի արդյունքները ներկայացվել են ՀՀ Լոռու մարզպետարան, ինչպես նաև հասանելի են Վանաձորի Օրհուս կենտրոնում: Բնապահպանական տեղեկատվությունը մշտապես տարածվել է բնակչության շրջանում:*

1.2.2 *Որպես արդյունք կարող է համարվել շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությունը համայնքային (օրինակ՝ Վանաձոր և Մարց համայնքներ) և տարածքային կառավարման մակարդակով(Մարզի սոց տնտեսական զարգացման ծրագրի քննարկումներ, կլիմայի փոփոխությանը հարմարվողականության պլաններ): այն, որ վերոնշյալ խնդիրներն իրենց լուծումները գտել են կենտրոնի կողմից խնդիրը վեր հանելու, բարձրաձայնելու և հետևողականության ու հսկողության արդյունքում:*

ՆՊԱՏԱԿ 3

Մասնակցում է հասարակական լսումներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

1.2.3 *Կենտրոնի աշխատակիցը մասնակցել է 1 հասարակական լսման (Վանաձորի խմելու ջրատարի վրա միկրո ՀԷԿ-ի կառուցում), որի վերաբերյալ տեղեկատվությունը տարածվել է: Այլ հանրային լսումների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվել հանրությանը (Մարց գետի վրա նախատեսվող ՀԷԿ, Վանաձորի հիվանդանոցային համալիրի կաթսայատան կառուցում, Գոգավան և Բագրատաշեն սահմանային անցակետերի արդիականացման ՇՄԱԳ նախագծեր), որի արդյունքում հանրությունը տեղեկացվել է նախագծերի*

վերաբերյալ և հնարավորություն է ունեցել մասնակցել որոշումների ընդունման գործընթացին:

1.3 ՆՊԱՏԱԿ 4

Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շաբաթօրյակներ և այլն):

1.3.1 Նշված կետի համաձայն իրականացվել են հանդիպումներ, քննարկումներ, որի ժամանակ քննարկվել և բարձրաձայնվել են տեղի բնապահպանական խնդիրներն ու լուծման տարբերակներ առաջարկվել, համագործակցության քայլեր ձեռնարկվել:

1.3.1.1 Հանդիպումների արդյունքում վեր են հանվել տեղի բնապահպանական խնդիրները, քննարկել և մշակվել են խնդիրների լուծման տարբերակներ:

1.4 ՆՊԱՏԱԿ 5

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է էկոկրթական դասընթացներ:

1.4.1 Վանաձորի Օրինա կենտրոնի գործունեության մեջ մեծ տեղ են զբաղեցնում էկոկրթական միջոցառումներն ու ծրագրերը: Այս կետի համաձայն իրականացվել են համապատասխան միջոցառումներ, այդ թվում այս տարի մեծ ուշադրություն է դարձվել կլիմայի փոփոխության հարմարվողականությանը, ինչպես նաև սննդային հավելումների օգտագործմանը:

1.5 ՆՊԱՏԱԿ 6

Կազմակերպում է Կենտրոնի ամենօրյա աշխատանքները, ապահովում է Կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն և պահպանումը: Կազմում, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակում և ներկայացում է Կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ու ֆինանսական փաստաթղթերը:

1.5.1 Այս ժամանակահատվածում ապահովվել է կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն ու պահպանումը: Կազմվել և իրականացվել է Կենտրոնի աշխատանքային պլանը, կատարվել և ներկայացվել են աշխատանքային հաշվետվությունները և ֆինանսական փաստաթղթերը:

2. Վիճակագրական մանրամասն տվյալներ Վանաձորի Օրինա Կենտրոնի կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ:
/կարող եք տեսնել կից ֆայլով/

3. Հաշվետվությանը կից ներկայացվող նյութեր (լուսանկարներ, տեսաձայնային նյութեր, հրապարակումների և շնորհակալական նամակների օրինակներ, հաջողված դեպքեր և պատմություններ և այլն): Ներկայացվում է կից ֆայլերով

Կենտրոնի համակարգող՝ Պերճ Բոջուկյան

E:mail bojukyanp@mail.ru

bojukyanp@gmail.com

Հեռ: 077723388, 055550037